



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 . Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

08.05.2012թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Հարգարժա՞ն գորակոչիկներ*

Շնորհավորում եմ բոլորիդ գորակոչի նշանակալի առիթով և բարեմաղթում, որ հայրենիքին ծառայելու ողջ ժամանակահատվածում Ձեզ մշտապես ուղեկցեն բարձր տրամադրությունն ու անսահման հայրենասիրությունը:


Հերթական այս գորակոչն առավել կարևորվում ու իմաստնանում է, քանի որ տեղի է ունենում Հայկական բանակի կազմավորման 20-ամյա հորեյանի խորախորհուրդ տարում և ազդարարում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայացման ու կատարելագործման իրողությունները:

Ցանկանում եմ, որ բանակային ծառայության տարիներն ընթանան միմիայն խաղաղության թնուրտում և իրավամբ դառնան Ձեր կենսագրության ամենաառանցքային ու պատասխանատու հատվածը:

Գարնանային գորակոչի այս տոնական առիթով շնորհավորելուն զուգահեռ անհրաժեշտ է բարեմաղթել, որ մեր հայրենիքի սահմանները մշտապես ամուր և անսասան լինեն ու առաջիկայում ևս մեր ժողովրդի պատմության էջերում ամրագրվեն նորովի հաղթանակներ:

Բարի ծառայություն և ամենայն բարիք եմ մաղթում բոլորիդ:

*Հարգանքներով*

 Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ